ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ հայտարարում է Բանկի Երևանի և Դիլիջանի Դրամարկղային կենտրոնների գործունեության համար տեխնիկական սարքավորումներ (թղթադրամի և մետաղադրամի իսկությունը ստուգող, տեսակավորող և հաշվող մեքենաներ, ջերմաեռակցող սարքեր) ձեռք բերելու մրցույթ՝

Մրցույթի պայմաններն են.

1. Թղթադրամների հաշվման, տեսակավորման համար կիրառվող մեքենաները պետք է ապահովեն թղթադրամների վճարունակության նվազագույն պահանջների հետևյալ ստուգումները (և դիմերեսի, և դարձերեսի համար).

1.1 Թղթադրամների տեսանելի պատկերի և չափերի համապատասխանությունը Կենտրոնական բանկի կողմից հաստատված նկարագրին,

1.2 Ուլտրամանուշակագույն լույսի ներքո հայտնաբերվող հատկանիշներ,

1.3 Ինֆրակարմիր լույսի ներքո հայտնաբերվող հատկանիշներ,

1.4 Մագնիսականություն:

2. Պիտանի, կենդ և հնամաշ/վնասված թղթադրամների որակում, առանձնացում, տեսակավորում:

3. Հաշված և տեսակավորած թղթադրամների վերաբերյալ հաշվետվություններ ստանալու/տրամադրելու և արտահանելու հնարավորություն:

4. Մետաղադրամների հաշվման, տեսակավորման համար կիրառվող մեքենաները պետք է ապահովեն մետաղադրամների վճարունակության նվազագույն պահանջների հետևյալ ստուգումները.

4.1 Մետաղադրամների չափերի (տրամագիծ և հաստություն) համապատասխանությունը Կենտրոնական բանկի կողմից հաստատված նկարագրին/անվանական արժեք և նկարագիր /,

4.2 Համաձուլվածքի ստուգում (մագնիսականություն, էլեկտրահաղորդականություն):

4.3 Սարքերի հետագա սպասարկման, ծրագրային կարգաբերման/Բանկի կողմից սպասարկվող արժույթների, այդ թվում ՀՀ դրամի ճանաչման, իսկության ստուգման/մասին տեղեկատվություն:

4.4 Պահանջվող տեխնիկական սարքավորումների մատակարարման վերջնաժամկետ սահմանել մինչև 15.03.2023թ.:

Պահանջվող փաստաթղթեր.

- մրցույթի մասնակցության դիմում հայտ
- կոմերցիոն առաջարկ
- կազմակերպության մասին տեղեկատվություն (կանոնադրություն, պետ.ռեգիստրի գրանցման վկայական)
- գործընկեր կազմակերպությունների ցանկ

Մրցույթին մասնակցել ցանկացողները կարող են մրցութային դիմում-հայտերի թղթային տարբերակը՝ պահանջվող փաստաթղթերի հետ միասին, փակ ծրարներով ներկայացնել «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ Գլխամասային գրասենյակ՝ ՀՀ, ք.Երևան, Նալբանդյան 48 հասցեով, մինչև 2023 թվականի փետրվարի 03-ը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 09:15-ից 16:45-ը:

Փակ ծրարի վրա պետք է նշվի.

- Մրցույթի անվանումը (թղթադրամի և մետաղադրամի իսկությունը ստուգող, տեսակավորող և հաշվող մեքենաների, ջերմաեռակցող սարքերի ձեռք բերման մրցույթ)
- «Չբացել մինչև մրցույթի անցկացման օրը» գրառումը,
- «Մրցութային հանձնաժողովին» գրառումը,
- ՈՒղարկող (Մրցույթի մասնակից) և ստացող (Մրցույթի կազմակերպիչ) կազմակերպությունների հասցեները, ամբողջական անվանումները:

Մրցույթի արդյունքների վերաբերյալ բոլոր մասնակիցները կտեղեկացվեն մինչև 2023 թվականի փետրվարի 10-ը:

Տեղեկությունների համար զանգահարել «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ Դրամական գործառնությունների վարչություն՝ +374-10-59-20-36 կամ +374-93-22-33-99 հեռախոսահամարներով:

Ձեռք բերման համար առաջարկվող տեխնիկական սարքավորումների մակնիշները և քանակը, որոնք համապատասխանում են պահանջվող պայմաններին:

Հ/հ	Տեսակը	Երևանի ԴԿ		Դիլիջանի ԴԿ	
		քանակ	միավորի գին /ՀՀ դրամ/	քանակ	միավորի գին /ՀՀ դրամ/
1	Թղթադրամ տեսակավորող մեքենա	2		1	
2	Թղթադրամ տեսակավորող մեքենա	1			
3	Մետաղադրամ տեսակավորող մեքենա	1		1	
4	Ջերմաեռակցող սարք	1		1	
5	Թղթադրամի իսկությունը ստուգող սարք	1		1	
6	Թղթադրամ հաշվող ստուգող մեքենա			1	